2018, ՀՈՒՆԻՍ Բ, ԹԻՎ 12 (512)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*13 հունիսի*

### «Ֆուլլեր տնաշինական կենտրոնի» կամավորներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց «Ֆուլլեր տնաշինական կենտրոն» բարեգործական կազմակերպության միջազգային կամավորներին՝ ուղեկցությամբ կազմակերպության ատենապետ Դեյվիդ Սնելի եւ խմբի ղեկավար Լեո Մանուելյանի:

Նորին Սրբությունը բարձր գնահատեց նրանց աստվածահաճո առաքելությունը, որի շնորհիվ օգտակարություն է ցուցաբերվում բազում կարիքավոր ընտանիքների: Հայոց Հայրապետը նաեւ ուրախությամբ արձանագրեց, որ Հայոց Եկեղեցին նույնպես թեմերի եւ եկեղեցական կառույցների միջոցով իր մասնակցությունն է բերել օգտաշատ այս ծրագրին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաեւ Հայ Եկեղեցու սոցիալական ու մարդասիրական տարբեր ծրագրերին, որոնց արդյունքում բազում կարիքավոր անձինք եւ ընտանիքներ ստանում են պատշաճ աջակցություն:

Այնուհետեւ շնորհակալության խոսքով հանդես եկավ տիար Դեյվիդ Սնելը՝ ընդգծելով, որ կենտրոնի հայաստանյան մասնաճյուղն աշխարհում ամենաարդյունավետն է՝ աշխատանքներում Եկեղեցու ներգրավվածության շնորհիվ: Վերջինս ընդգծեց, որ կենտրոնը մշտապես զորակից է Եկեղեցուն, եւ պատրաստակամություն հայտնեց ծրագրի շրջանակներում շարունակելու գործակցությունը Հայոց Եկեղեցու հետ: Իր հերթին տիար Լեո Մանուելյանը նույնպես անդրադարձավ Վեհափառ Հայրապետի անձնական մասնակցությանը ծրագրին:

Վերջում Գարեգին Բ Հայրապետն ազնիվ աշխատանքի, հանձնառության եւ Հայ Եկեղեցուն ցուցաբերված զորակցության համար իր գոհունակությունը հայտնեց նրանց՝ հորդորելով նույն նախանձախնդրությամբ շարունակել իրենց օրհնյալ ընթացքը:

### ՀՀ-ում Լեհաստանի նորանշանակ դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Լեհաստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Պավել Չեպլակին:

Հայոց Հայրապետը նշանակման կապակցությամբ շնորհավորեց պրն Պավել Չեպլակին՝ փոխանցելով իր բարեմաղթանքները: Անդրադառնալով հայ-լեհական բարեկամական սերտ կապերին՝ Նորին Սրբությունն ընդգծեց, որ դրանք գալիս են դարերի խորքից եւ պայմանավորված են Լեհաստանում հայկական համայնքի առկայությամբ:

Վեհափառը գոհունակությամբ արձանագրեց նաեւ, որ միջեկեղեցական ոլորտում եւս առկա են ջերմ հարաբերություններ ու գործակցություն:

Այնուհետեւ Լեհաստանի դեսպանն Ամենայն Հայոց Կաթողիկոսին տեղեկություններ փոխանցեց Լեհաստանում քրիստոնեական տարբեր համայնքների վերաբերյալ:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց հայ համայնքի եւ նրա ազգային-հոգեւոր կյանքին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

### ՀՀ արտաքին գործերի նախարարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանին:

Նորին Սրբությունը նշանակման առիթով շնորհավորեց նախարարին եւ մաղթեց Սուրբ Հոգու առաջնորդությունը, որ նա կարողանա աշխարհի ներկա բարդ եւ դժվարին ժամանակներում հայրենիքի շահերը լավագույնս պաշտպանել եւ երկրի համար դրական արդյունքներ արձանագրել, շեշտեց, որ Հայոց Եկեղեցին մշտապես քայլել է ազգի հետ, առաջնորդել նրան եւ պատմության ընթացքում զորավիգ է եղել հայրենի պետությանը, իսկ պետականության բացակայության պայմաններում հայորդիների մեջ վառ է պահել անկախ պետականությունը վերականգնելու նախանձախնդրությունը:

Վեհափառ Հայրապետն արձանագրեց նաեւ, որ պետականությունն է ազգի հարատեւության երաշխավորը, եւ Հայոց Եկեղեցին, հավատարիմ հայրերի այս պատգամին, պիտի շարունակ նեցուկ լինի հայրենի պետությանը, որպեսզի այն լինի բարվոք եւ զորավոր:

Պրն Զոհրաբ Մնացականյանը, շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետի բարեմաղթանքների եւ աղոթքների համար, ընդգծեց, որ արտաքին գործերի նախարարի պաշտոնը մեծ պատասխանատվություն եւ պարտավորություն է ենթադրում:

Վերջինս անդրադարձ կատարեց Հայոց Եկեղեցու պատմական առաքելությանը եւ ազգային միասնականության ամրապնդման գործում կարեւոր դերակատարությանը՝ քրիստոնեական հավատը նկատելով ազգային ինքնության պահպանման սյուներից մեկը: Զրույցի ընթացքում խոսվեց տարածաշրջանում տիրող իրավիճակի, ինչպես նաեւ հայրենիքի առջեւ ծառացած զանազան մարտահրավերների մասին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

*14 հունիսի*

### Անտիոքի Ուղղափառ Եկեղեցու՝ Զահլեի միտրոպոլիտին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Անտիոքի Հույն Ուղղափառ Եկեղեցու՝ Զահլեի եւ Բաալբեքի միտրոպոլիտ Անտոնիոս Էլ Սոուրիին՝ ուղեկցությամբ բարերար Նիկոլա Աբու Ֆեյսալի:

Նորին Սրբությունը, ողջունելով Լիբանանից ժամանած հյուրերին, կարեւոր նկատեց այն, որ երկու ժողովուրդների ու Եկեղեցիների հարաբերությունները հատկանշված են եղբայրական ջերմությամբ, իսկ նմանօրինակ այցերը նոր ազդակ են հանդիսանում գործակցության առավել զորացման եւ ամրապնդման առումով:

Հայոց Հովվապետը, իր եղբայրական ողջույններն ու բարեմաղթանքները փոխանցելով Անտիոքի Հույն Ուղղափառ Եկեղեցու պետ Նորին Սրբություն Հովհաննես Ժ Պատրիարքին, հավելեց, որ այս հանդիպումներն առիթ են ընծայում միմյանց առավել ճանաչելու համար: Գարեգին Բ Կաթողիկոսը մասնավորապես անդրադարձավ Լիբանանի հայ համայնքի աշխույժ ազգային-հոգեւոր կյանքին:

*Շարունակությունը՝ էջ 4*

# Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցի տարվեցին Լուսավորչի մասունքները

Այս տարի Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին Ս. Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտի տոնը նշում է հունիսի 16-ին:

Տոնը տարիներ առաջ հռչակվել է նաեւ քաղաքամայր Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու ուխտի օր:

Այս առիթով Մայր Աթոռի ավանդատուն-թանգարանից հավատացյալների երկրպագության եւ օրհնության համար դուրս են բերվել ս. Գրիգոր Լուսավորչի մասունքները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուղեկցությամբ եկեղեցական հանդիսավոր թափորի, Մայր տաճարի առջեւ հայոց հավատի հոր մասունքները փոխանցեց Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Անուշավան եպս Ժամկոչյանին:

Մինչ այդ ներկա բարեպաշտ ուխտավորները մոտեցան եւ համբուրեցին սուրբ մասունքն ու Ամենայն Հայոց Կաթողիկոսի աջը:

Այնուհետեւ սրբի մասունքները տարվեցին Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցի:

Տոնի առիթով մայր եկեղեցում մատուցվեց Պատարագ՝ ձեռամբ Երեմիա վրդ. Աբգարյանի: Հավարտ սրբազան արարողության՝ Հայաստանի տարբեր համայնքներից ուխտի եկած հավատացյալները հնարավորություն ունեցան հպվելու եւ օրհնություն ստանալու ս. Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի մասունքներից:

# Երեկո՝ նվիրված Ռուբեն Սեւակի հիշատակին

Հունիսի 18-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Ռուբեն Սեւակ» թանգարանում տեղի ունեցավ երեկո՝ նվիրված նահատակ բանաստեղծի հիշատակին:

Միջոցառմանը մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ, արվեստագետներ, թանգարանի բարերար Հովհաննես Չիլինգիրյանի դուստր Շամիր Չիլինգիրյանը՝ իր ամուսնու՝ Հակոբ Ավագյանի հետ:

Բացման խոսքով հանդես եկավ թանգարանի տնօրեն Սեւակ քհն. Սարիբեկյանը, այնուհետեւ արեւմտաեվրոպական ու հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների կատարումներով հանդես եկան Ղազարոս Սարյանի անվան լարային քառյակը եւ «Նաիրյան» վոկալ անսամբլը: ՀՀ վաստակավոր արտիստ Գրետա Մեջլումյանը կարդաց Ռուբեն Սեւակի բանաստեղծություններից:

Հանդիսության ավարտին ներկաներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ անդրադառնալով Մայր Աթոռում Ռուբեն Սեւակի անվան թանգարանի հիմնադրմանը եւ թանգարանի բարերար Հովհաննես Չիլինգիրյանի այն երազին, որ թանգարանի յուրաքանչյուր այցելու հաղորդ դառնա այն մեծագույն ողբերգությանը, որ վերապրել է մեր ժողովուրդն անցած դարասկզբին, որպեսզի Ռուբեն Սեւակի եւ իր գրչակից ընկերների պատմությունը հասանելի դառնա յուրաքանչյուրին:

Վեհափառ Հայրապետը խոսեց Ռուբեն Սեւակի լուսավոր կերպարի մասին, որով կրթվել եւ կրթվում են սերունդներ: Սեւակի ոգին, ըստ Նորին Սրբության, դրսեւորվեց նաեւ արցախյան գոյամարտի օրերին, եւ յուրաքանչյուր նման քաջագործությամբ նորովի են ապրում հայոց ազգի սուրբ նահատակները, որոնք հավերժության ճամփորդ դարձան հերոսությամբ եւ իրենց անձերի նահատակությամբ:

Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը երախտագետ սրտով վերստին շնորհակալություն հայտնեց բարերարի ընտանիքին՝ հայ ժողովրդին հիշատակի նման գեղեցիկ անկյուն պարգեւելու համար, ուր այցելուները ոչ միայն ծանոթանում են Սեւակի կայնքին ու ժառանգությանը, այլեւ ճանաչում նրա ոգին:



Մայր Աթոռի Ղազարապատ կոչված պատմական շենքում տեղակայված թանգարանը բացվել է 2013 թ. սեպտեմբերի 10-ին: Թանգարանում ցուցադրվում են նահատակ բանաստեղծ, արձակագիր եւ բժիշկ Ռուբեն Սեւակին պատկանող անձնական իրեր ու փաստաթղթեր, պատմական սրբազան ցուցանմուշներ, ածխանկարներ եւ հայ արվեստի արժեքավոր գործեր, ինչպես նաեւ արեւմտահայ նկարիչների բացառիկ եւ արժեքավոր շուրջ 200 կտավ՝ Մայր Աթոռին նվիրաբերված ֆրանսահայ Հովհաննես Չիլինգիրյանի կողմից:

Սեպտեմբերին թանգարանը կտոնի իր հնգամյակը: Այդ կապակցությամբ կսահմանվի Ռ. Սեւակի անձին, կյանքին եւ ժառանգությանը նվիրված Սեւակյան մրցանակ, որը շնորհվելու է մշակույթի, արվեստի, գրականության եւ երաժշտության ասպարեզում արձանագրված ձեռքբերումների համար:

## Նոր ճեմանակում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ Հրանտ քհն. Մանուկյանը ծառայության է կոչվել Կանադայի հայոց թեմում՝ Կանադայի հայոց թեմի առաջնորդ Աբգար եպս Հովակիմյանի հոգեւոր իշխանության ներքո:

## Հայրապետական տնօրինություն

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հունիսի 21-ի տնօրինությամբ Կորյուն աբեղա Առաքելյանն ազատվել է Ս. Գայանե վանքի վանահոր պարտականություններից:

Այս առնչությամբ Մայր Աթոռի լուսարարապետությանը թելադրվել է ապահովել հայր Կորյունի կեցությունը մայրավանքում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կարգապահական հանձնախմբին հանձնարարական է տրվել քննության առնել Կորյուն աբեղա Առաքելյանի հետ առնչված խնդիրները:

Նորին Սրբության տնօրինությամբ Ս. Գայանե վանքի վանահայր է նշանակվել Մատթեոս վրդ. Պողոսյանը:

# Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց «Իզմիրլյան» բժշկական կենտրոն

Հունիսի 16-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանի ուղեկցությամբ այցելեց «Իզմիրլյան» բժշկական կենտրոն, ուր հանդիպեց արցախյան ազատամարտի, ապրիլյան քառօրյայի եւ զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ստացած 15 զինվորականների հետ: Վերջիններս պրոթեզավորման համար անհրաժեշտ բուժական զննության ենթարկվեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ եւ հրավերով Հայաստան ժամանած Գերմանիայի առաջատար «Օթթոբոք» կլինիկայի՝ Հնդկաստանի մասնաճյուղի օրթոպեդ-վնասվածքաբանների կողմից:

Հանդիպմանը ներկա էին հնդկահայոց հոգեւոր հովիվ Մովսես աբդ. Սարգսյանը, Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու վարչության փոխատենապետեր Սունիլ Սոբթին եւ Սյուզան Ռուբենը:

Զինվորականներին փոխանցելով հայրապետական իր օրհնությունը՝ Նորին Սրբությունը բարձր գնահատեց նրանց ծառայությունը հայրենիքին եւ դրսեւորած հերոսական ոգին: «Ձեր կյանքը, ձեր անձը հանձնառու կերպով ընծայաբերել եք մեր երկրի պաշտպանությանը, մեր ժողովրդի անվտանգ կյանքի նվիրական գործին: Աստված թող օրհնի ձեզ»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Գարեգին Բ Կաթողիկոսը տեղեկացրեց, որ Մայր Աթոռը, որ երեք տարի առաջ Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցու վարչության հետ համատեղ կյանքի է կոչել այս ծրագիրը եւ նպաստել հաշմանդամություն ստացած երեք զինվորականների պրոթեզավորմանը Հնդկաստանում, ծրագրում է բուժսպասարկումն ամբողջությամբ իրականացնել Հայաստանում, ինչը հնարավորություն կընձեռի օգտակար ծառայություն մատուցել ավելի մեծ թվով զինվորականների:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր գնահատանքը հայտնեց Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու վարչությանը՝ կարեւոր այս հանձնառության համար:



## ԱԲՈՎՅԱՆԸ ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ. ՆՐԱ ԲԵՐԱԾ ԳՐԱԿԱՆ - ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

# ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ (1809-1848)

*Սկիզբը՝ թիվ 4-9, 11*

Խ. Աբովյանն ինքն էլ միանգամից չի եկել այդպիսի գիտակցության, սակայն նա 19-րդ դարի 30-40-ական թթ. հայ իրականության մեջ առաջինն էր, որ աստիճանաբար զգաց զարգացող կյանքի եւ հետամնաց գրականության մեծ անհամապատասխանությունն ու խզումը, գեղարվեստական մտածողության զարգացման ընթացքն արմատապես փոխելու պատմական անհրաժեշտության գիտակցումով դիմեց համակարգված վճռական քայլերի: Իր տարբեր ժանրերով ստեղծագործությունների («Պարապ վախտի խաղալիք», «Հազարփեշեն», «Ֆեոդորա», «Ագնես») փոքրիկ առաջաբաններում նա տեսականորեն արտահայտվել է նոր մտածողության, գեղարվեստի թարմացման պատմական անհրաժեշտության մասին, սակայն իր մտքերն ու խորհրդածությունները նա համակարգված բանաձեւել է իր գլուխգործոցի՝ «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանում» եւ այլ էջերում: Այստեղ է, որ նա հանճարեղորեն բնորոշել է մեր գրաբար գեղարվեստական գրականության էությունը, բովանդակությունն ու կշիռը եւ հիմնավորել նոր լեզվով ու բովանդակությամբ, նոր թեմաներով ու գաղափարներով, նոր կերպարներով գրականության ստեղծման պատմական անհրաժեշտությունը: Ակադեմիկոսներ Ա. Տերտերյանը, Հր. Թամրազյանն ու Էդ. Ջրբաշյանն այնքան ճիշտ են պատկերացրել ու ներկայացրել մեր գեղարվեստական մտքի զարգացման ընթացքը, որ այս խնդրում նրանց հակադրվելն անիմաստ է պարզապես: Ահա ինչ է գրել ակադ. Էդ. Ջրբաշյանն իր վերջին գրքերից մեկում. «Հայ գրականությունը, որ մինչեւ 19-րդ դարի սկիզբը անցել էր արդեն մոտ մեկուկես հազարամակի գրեթե անընդհատ զարգացման ճանապարհ, Աբովյանի ժամանակ կանգնած էր իսկական փակուղու առջեւ, գտնվում էր խոր ճգնաժամի մեջ: Ավարտել էր գրական զարգացման միջնադարյան շրջանը, նրա բովանդակությունը, լեզուն, ժանրային համակարգը սպառել էին իրենց ստեղծագործական հնարավորությունները եւ պետք է էապես վերանորոգվեին: Անհրաժեշտ էր գրականության ժողովրդայնության սկզբունքն իրագործել նոր պատմաշրջանի պահանջների ոգով: Եվ Աբովյանը եղավ հայ գրականության դեմոկրատացման պատմական անհրաժեշտության ամենամեծ կրողն ու իրագործողը: Ճիշտ է, սկսած 18-րդ դարի վերջերից մինչեւ 19-րդ դարի կեսերը գրական զարգացման նոր ուղիներ էին որոնում նաեւ ուրիշ հեղինակներ՝ Հ. Ալամդարյանից, Մ. Թաղիադյանից մինչեւ Արսեն Բագրատունի եւ Մխիթարյան միաբանության այլ գործիչներ: Սակայն ո՛չ իրենց ստեղծագործության նյութով ու բովանդակությամբ, ո՛չ էլ, մանավանդ, գրաբար լեզվով նրանք չէին կարող դառնալ գրական նոր շարժման սկզբնավորողներ: Լավագույն դեպքում նրանք արձագանքում էին 17-18-րդ դարերի եվրոպական կլասիցիզմի սկզբունքներին, որոնք նոր ժամանակներում արդեն չէին կարող հիմք լինել արդյունավետ գրական զարգացման համար: Գտնել հայ գրականության արմատական վերանորոգման ուղին՝ վիճակված էր միայն Խ. Աբովյանին» *(Ջրբաշյան Էդ., Գրողը եւ ժողովուրդը, «Սովետական գրող», Եր., 1989, էջ 15-16)*:

Մեր նախորդներն ավանդաբար ասել են եւ սերնդեսերունդ փոխանցել, թե «Հառաջաբանում» Աբովյանն արծարծել է երեք հիմնահարց՝ **նոր գրականության բովանդակության, լեզվի եւ հերոսի**: Հիմնականում ճիշտ այս մոտեցումը, սակայն, թերի է. դուրս են մնացել հեղինակի շատ կարեւոր մտորումներ՝ հասկանալի լեզվով «սրտի բաներ» ասելու, «աշխարհի բաներ» սովորեցնելու եւ այդպիսով մեր «լեզուն էրեխին սիրել տալու», մեր դրախտանման սրբազան հայրենիքի առաջվան սքանչելիքներն արժեւորելու, մեր կորցրած փառքն ու վայելքը ետ բերելու, հեռավոր քաջակորով նախնիների՝ «Է՛ն հիանալի թագավորաց ու իշխանաց գործքն ու կյանքը», «մեր ընտիր ազգի անանման բնությունը» սովորեցնելով՝ սերունդների բնական կապն ու ժառանգական հաջորդականությունը պահպանելու, նորերին ազգային բնավորություն ու նկարագիր ներարկելու պատգամները: Դուրս են մնացել նաեւ հայալեզու մատչելի ազգային գրականության ստեղծման անհրաժեշտությանը զուգահեռ՝ օտարալեզու աշուղական արվեստի դեմ պայքարի եւ «հայեվար ասելու» անհրաժեշտության պատգամախոսությունը: Աշուղական արվեստի եւ ժողովրդական բանահյուսության աբովյանական գնահատման, գրողի ստեղծագործական ազատության ու ոգեւորության կարեւորման եւ այլ հիմնահարցեր նույնպես պատշաճ ուշադրության չեն արժանացել:

Ուրեմն՝ Աբովյանի գրական ու լեզվական հայացքների հանրահայտ այդ բնութագիրը պետք է պահպանել, սակայն վերանայելով ու համալրելով: Սովորաբար գրականագետները միմյանցից առանձնացնում եւ անջատ-անջատ են բնութագրում «Վերքի» «Հառաջաբանում» արծարծված փոխշաղկապված գրական հիմնախնդիրները, որ իրավամբ կարելի է համարել հայ նոր գրականության զարգացման սահմանադրություն կամ հռչակագիր:

**Գրաբար-աշխարհաբար հարաբերության աբովյանական արծարծումները** մեզանում արժանացել են թեեւ հիմնականում ճիշտ, սակայն որոշ իմաստով միակողմանի մեկնաբանության: Այդ միակողմանիությունը կվերանա, եթե լեզվական խնդիրը հարակից մյուս հիմնախնդիրներից չտարանջատվի եւ կատարվի դրանց համալիր քննություն: Հարցի մեկնաբանությունը պետք է սկսել այն իրողության ընդունումից, թե ի՛նչ էր հասկանում Խ. Աբովյանը լեզու ասելով, եւ ի՛նչ էր նրա համար մանավանդ հայոց լեզուն:

«Լեզուն դարտակ խոսք չի, այլ հոգին ա մարդիս»,- բանաձեւել է Խ. Աբովյանը: Ծանր մտահոգություն էր նրա համար եւ այն, որ հայ երեխաները եվրոպական օտար լեզուներն ավելի էին սիրում, քան մերը, որովհետեւ հայ գեղարվեստական ու հասարակական միտքը պարփակված էր մեռած գրաբարի պատյանում, որին ի վիճակի չէր հաղորդակցվելու հայության նոր սերնդի բացարձակ մեծամասնությունը:

*Շարունակությունը՝ էջ 8*

# Սսի 1243 թ. Բ ԺՈՂՈՎ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

*Սկիզբը՝ թիվ 9-11*

### Բարեկարգական կանոններ

Ստորեւ բերված կանոնները ընդհանուր կերպով զանազան բարեկարգական կետերի են անդրադառնում:

**Թ.** «Օտար երկրից եպիսկոպոս, վարդապետ, քահանա կամ գերու տեր առանց թեմի եպիսկոպոսի գիտության թող չշրջեն կամ չկառուցեն եկեղեցի, վանք, այլ միայն նրա հրամանով ըստ պատշաճի, բայց օրինականներին չպետք է հակառակվեն եւ ընդդիմանան, իսկ եթե որեւէ մեկը հանդգնի՝ նզովյալ լինի» (Կիրակոս Գանձակեցի, նույն տեղում):

Ինչպես պարզ է դառնում կանոնից, օտար երկրից եկած եպիսկոպոսներ, քահանաներ, վարդապետներ կամ գերու տերեր առանց թեմի եպիսկոպոսի իմացության շրջել են երկրի տարածքով, կարգադրություններ արել, նույնիսկ եկեղեցիներ կառուցել: Այսինքն՝ օտար հոգեւորականները Հայաստանում իրենց տեր են զգացել եւ տարբեր հրամաններ տվել: Չնայած, մեր կարծիքով, բավական աստվածահաճո գործ են կատարել, եթե կառուցել են առաքելական ուղղադավան եկեղեցիներ: Բայց դրանք եղել են առանց եպիսկոպոսի իմացության: Բնականաբար դա հակասում է եկեղեցական սահմանադրությանը: Նրանց մեջ, ինչպես արդեն ասացի, եղել են նաեւ գերու տերեր, եւ հնարավոր է՝ հենց այդ դրությունից ելնելով է, որ իրենց այդպես են պահել եւ ինքնագլուխ որոշումներ կայացրել: Կանոնի կարեւորագույն մասը նշվում է վերջում, որը սահմանում է այդպիսիներին նզովել եւ զրկել Եկեղեցու հաղորդությունից: Այս հատվածը կարծես սթափեցնող ազդեցություն ունի եւ կարգավորել է այս խնդիրը:

**Ժ.** «Գրքերի դասասացները բազմության ներկայությամբ են ընտրվում, որ գիտուն, բոլոր գրքերին վարժ ու տեղյակ եւ ամեն բանով բանիբուն լինեն. նույնպես եւ գրքերին աշակերտողները (լինեն) նույնի ընտրությամբ եւ ավելի իմացությամբ ու կատարյալների վկայությամբ» (Կիրակոս Գանձակեցի, էջ 218-219):

Սսի 1243 Բ ժողովի բարեկարգական այս որոշումն ուսումնասիրելիս մենք կրկին առնչվում ենք գիտուն ուսուցիչների խնդրին, որը շատ կարեւոր հանգամանք է բոլոր ժամանակներում: Ինչպես սահմանում է կանոնը, դասասացները պետք է լինեին գիտուն, բոլոր գրքերին վարժ եւ ամեն բանով բանիբուն լինեին: Կանոնի առկայությունն ինքնին ցույց է տալիս, որ ուսուցիչը՝ այդ շատ կարեւոր ու պատասխանատու աշխատանքի կատարողը, չի համապատասխանել բոլոր չափանիշներին: Մեր կարծիքով՝ ուսուցիչներն իրենց աստիճանին հասել են գործատուներին կաշառելով: Ուղղակի պետք էր գիտակցել մի շատ պարզ, բայց միաժամանակ շատ կարեւոր բան, որ իրենցից է կախված այդ մատաղ սերնդի կրթությունը, որը լինելու էր նրանց լավ ապագայի երաշխիքը: Եվ հիմա էլ շատ կարեւոր է ուսուցչի դերը մարդու կյանքում: Ինչպես այն ժամանակ, այսօր եւս գիտելիքն ամենամեծ կապիտալն է, եւ պետք է հնարավորինս շատ գիտելիք ամբարել՝ կյանքում հաստատուն տեղ ունենալու համար: Եվ մանավանդ այդ ծանր ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդը կենաց ու մահու կռիվ էր մղում, շատ կարոր էր մանուկների կրթությունը: Սակայն ի՞նչն է առավել հետաքրքրական բարեկարգական այս կանոնի մեջ. ինչպես հասկանալի է դառնում, բոլորը չէ, որ կարող էին կրթություն ստանալ: Ինչպես որ ուսուցիչների ներկայությունը պետք է լիներ բազմության ներկայությամբ, այսինքն՝ դասավանդելու իրավունք պետք է ունենային միայն գիտունները, այնպես էլ պետք է տեղի ունենար աշակերտների ընտրությունը: Եվ ոչ բոլորը պետք է իրավունք ստանային կրթվելու: Սակայն, մեր կարծիքով, գոնե տարրական կրթության իրավունք պետք է ունենային բոլորը, բայց կանոնը հստակ չի նշում, թե կրթության որ տեսակին է վերաբերում այս հատվածը:

**ԺԱ.** «Եպիսկոպոսը պետք է հրամայի, որ եկեղեցու սուրբ գրքերը գրեն հմուտները գրելու մեջ, ուղղափառներն ու գիտունները» (Կիրակոս Գանձակեցի, էջ 219):

Այս կանոնը գրված է այն պատճառով, քանի որ այդ աշխատանքները գրողները իրենց ստեղծագործություններով կարող էին սխալ հետեւանքների հանգեցնել՝ իրենց անվարժ եւ ոչ շիտակ ընդօրինակությունների պատճառով կամ միտումնավոր: Սա էլ մի տեսակ զգուշական գրաքննություն է, որը շատ կարեւոր էր, երբ լատինասիրությունն սկսում էր ընդարձակվել: Ինչպես գիտենք, Եկեղեցու սուրբ գրքերը ոչ միայն Հայ Եկեղեցու, այլեւ ողջ հայ ժողովրդի գանձն են եւ անբաժան մասնիկը: Ցավոք, շատ ու շատ ձեռագրեր ոչնչացվել են պատմական տարբեր ժամանակներում եւ տարբեր իրավիճակներում: Եվ այսօր մեր սրբազան պարտքն է ոչ միայն պահել, պահպանել ու սերունդներին փոխանցել այդ ողջ գիտելիքը եւ հարուստ գիտական ժառանգությունը, այլեւ նոր վերլուծություններով ավելացնել Եկեղեցու սրբազան գրականությունը: Եվ ինչպես մեր օրերում, այնպես էլ ԺԳ դարի 40-ական թվականներին առկա է եղել այդ խնդիրը, բայց այն մասամբ է ստացել իր ճիշտ, համակարգային ու համակողմանի լուծումը: Ինչպես մենք հասկանում ենք բարեկարգական այս կանոնը քննելիս, այն կարծես անդրադառնում է երեք կարեւոր կետի, որ Եկեղեցու սուրբ գրքերը գրեն գրելու մեջ հմուտները, ուղղափառներն ու գիտունները: Սրանից պարզ է դառնում, որ եկեղեցական գրականության մեջ հայտնվել են շատ պարականոն, Հայ Եկեղեցու հիմնական վարդապետությունից շեղված գրական աշխատանքներ: Եվ ինչպես նշում է Օրմանյան սրբազանը, դա կարող էր կապված լինել հայերի՝ այդ ժամանակաշրջանում այդքան տարածված լատինամետության հետ (տե՛ս Օրմանյան Մ., Բ, ս. 1904): Եվ այդպիսով՝ Հայ Եկեղեցու սրբազան գրականության մեջ են թափանցել այնպիսի ստեղծագործություններ, որոնք հակասել են ճշմարիտ վարդապետությանը եւ գրողի անձնական կարծիքի ու սխալ վերլուծության արդյունք են: Եվ այդ պատճառով է, որ կանոնը սահմանում է՝ ոչ միայն ուղղափառները պիտի գրեն այդ ստեղծագործությունները, այլեւ գիտունները եւ հմուտները: Այս կանոնը փորձել է լուծել շատ կարեւոր մի խնդիր, որը անխուսափելի էր տվյալ ժամանակաշրջանում:

**ԺԲ.** «Եպիսկոպոսը տարեկան երկու անգամ պետք է շրջի իր թեմում, ժողով անի իր հոտի հետ. եւ սուրբ ու գիտուն քորեպիսկոպոս պետք է նշանակի, որ Եկեղեցու դատաստանը ըստ կանոնների անել կարողանա. լինի երկյուղած, ոչ ագահ» (Կիրակոս Գանձակեցի, նույն տեղում):

*Շարունակությունը՝ էջ 6*

# Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*14 հունիսի*

## Անտիոքի Ուղղափառ եկեղեցու՝ Զահլեի միտրոպոլիտին

*Սկիզբը՝ էջ 4*

Ապա Զահլեի միտրոպոլիտը խոսեց երկու Եկեղեցիների միջեկեղեցական սերտ հարաբերությունների մասին, որոնք պատմական, ավանդական խոր արմատներ ունեն, ինչպես նաեւ անդրադարձավ հայ համայնքի հետ իր ջերմ կապերին: Նա տեղեկացրեց, որ իր՝ թվով երրորդ այցն է Հայաստան, եւ ամեն անգամ ինքը տեսնում է հայորդիների ամուր եւ ծաղկուն հավատքը: Միտրոպոլիտ Անտոնիոս Էլ Սոուրին նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին տեղեկություններ փոխանցեց իր հոգեւոր խնամատարության ներքո գտնվող համայնքների մասին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը, վերստին իր օրհնությունը փոխանցելով ներկաներին, աղոթեց Լիբանանի ժողովրդի խաղաղ եւ առաջընթաց կյանքի համար:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանն ու Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Շահե ծ. վրդ. Անանյանը:

*15 հունիսի*

## ՀԲԸՄ-ի նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերճ Սեդրակյանին:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀԲԸՄ-ի նախագահն անդրադարձան Հայաստանում եւ Սփյուռքում ազգի առջեւ ծառացած զանազան մարտահրավերներին, դրանց դիմագրավման գործում Հայ Եկեղեցու դերակատարությանը, ինչպես նաեւ քննարկեցին Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ-ի համատեղ ծրագրերի ընթացքը:

Այս կապակցությամբ պրն Պերճ Սեդրակյանն ընդգծեց, որ միությունը, կարեւորելով ազգային կյանքում Հայոց Եկեղեցու պատմական առաքելությունը, մշտապես բարոյական եւ նյութական աջակցություն է բերել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ տարբեր ազգօգուտ նախաձեռնություններին՝ նպաստելով եկեղեցաշինական, հոգեւոր-կրթական, բարեգործական, սոցիալական եւ առողջապահական բազմաթիվ ծրագրերին: Դրանց շարքում մեծ ուշադրություն է դարձվել եկեղեցականների նոր սերնդի պատրաստության գործին, ինչի շնորհիվ այսօր բազում երիտասարդ հոգեւորականներ իրենց գնահատելի սպասավորությունն են բերում Հայոց Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերում:

Զրույցի ընթացքում կարեւորվեցին մատաղ սերնդի հոգեւոր եւ հայեցի դաստիարակությանն ուղղված ձեռնարկները: Այս առնչությամբ անդրադարձ կատարվեց Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ-ի հովանու ներքո գործող հայորդյաց տների կառույցի հետագա ընդլայնման եւ ուսումնական գործընթացի արդիականացման ծրագրերին:

Նորին Սրբությունն իր գնահատանքն ու շնորհակալությունը հայտնեց ՀԲԸՄ-ի նախագահին եւ ՀԲԸՄ-ի անդամներին՝ Մայր Աթոռի առաքելությանը ցուցաբերվող զորակցության համար:

Գարեգին Բ Կաթողիկոսը եւ ՀԲԸՄ-ի նախագահը նաեւ խոսեցին ներհայաստանյան քաղաքական վերջին զարգացումների մասին: Համոզում արտահայտվեց, որ երկրում տեղ գտած փոփոխությունները կամրապնդեն հայրենաբնակ ժողովրդի բարօր կյանքն ու կնպաստեն պայծառ ապագայի կերտմանը:

*17 հունիսի*

## ԱՄՆ հայոց արեւելյան եւ արեւմտյան թեմերի ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց ԱՄՆ հայոց արեւելյան եւ արեւմտյան թեմերից ժամանած ուխտավորների՝ ուղեկցությամբ «Արարատ» տան վարիչ-տնօրեն Դերիկ Ղուկասյանի եւ Ժակլին Էլ Շամմասի, ինչպես նաեւ՝ Միչիգանի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու ծխական խորհրդի անդամների:

Արեւելյան եւ արեւմտյան թեմերի անունից ողջույնի խոսք ասացին Ժակլին Էլ Շամմասն ու Դերիկ Ղուկասյանը՝ Նորին Սրբությանը փոխանցելով իրենց թեմերում ծառայող հոգեւորականների որդիական սերն ու խոնարհությունը, ինչպես նաեւ ներկայացրեցին հայրենիքում իրականացվող բարեգործական ծրագրերը:

Այնուհետեւ Գարեգին Բ Վեհափառը, բերելով իր հայրապետական սերն ու գնահատանքը ուխտավորներին, շեշտեց, որ որպես Հայրապետ՝ մեծ ուրախություն է ապրում, երբ ամեն անգամ տեսնում է, թե ինչպես են հայորդիները ժամանում հայրենիք եւ համայնասփյուռ հայության հոգեւոր կենտրոն այն գիտակցությամբ, որ իրենք նույնպես հոգեւոր ու ազգային արժեքների կրողն են եւ իրենց աստվածահաճո գործունեությամբ զորակցություն են բերում հայրենաբնակ եղբայրներին ու քույրերին:

Անդրադառնալով նրանց կողմից հայրենիքում իրականացվող բարեգործական ու մարդասիրական ծրագրերին՝ Նորին Սրբությունը հայցեց Երկնավորից, որ Տերն իրենց աստվածօրհնյալ առաքելության ողջ ընթացքում օրհնի ամենքին:

Հանդիպմանը Հայոց Հովվապետն անդրադարձավ Հայ Եկեղեցու սոցիալական եւ հոգեփրկչական առաքելությանը, ներկայացրեց հայ ժողովրդի ու Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերները՝ կարեւորելով միասնական ջանքերը դրանց հաղթահարման համար:

Վերջում հայապահպանության գործում բերած կարեւոր ավանդի համար իր գնահատանքը վերստին փոխանցելով ուխտավորներին՝ Վեհափառ Հայրապետը հորդորեց նույն նախանձախնդրությամբ շարունակել կրողը լինել նախնյաց ավանդած հսկայական ժառանգության եւ այն անխաթար փոխանցել հաջորդ սերունդներին:

Ապա ուխտավորները նաեւ ներկա գտնվեցին Միածնաէջ Մայր տաճարում մատուցվող Պատարագին:

*19 հունիսի*

## Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Սրբոց Թարգմանչաց վարժարանի ուսուցիչներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Սրբոց Թարգմանչաց վարժարանի ուսուցիչներին՝ առաջնորդությամբ Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ, վարժարանի տեսուչ Նորայր վրդ. Գազազյանի:

Հանդիպմանը հայր Նորայրն Ամենայն Հայոց Հայրապետին ներկայացրեց վարժարանի հայ եւ օտարազգի ուսուցիչների այցի նպատակը, անդրադարձավ վարժարանի գործունեությանը:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Հայրապետն իր գնահատանքը փոխանցեց վարժարանի ուսուցիչներին՝ նշելով, որ երեխաներին կրթելն ու դաստիարակելը մարդկային կյանքի օրհնյալ առաքելություններից են: Նորին Սրբությունն ընդգծեց, որ Աստծո պատվիրանների համաձայն սերունդներ կրթելը նշանակում է կերտել մարդկության համար լուսավոր ապագա՝ զերծ

չարագործություններից, անօրենություններից եւ բռնություններից, ապագա՝ լեցուն բարությամբ, սիրով եւ խաղաղությամբ:

Հայոց Հայրապետը վարժարանի ուսուցչական անձնակազմին մաղթեց Աստծո օգնականությունն ու առաջնորդությունը, որպեսզի իրենց սրբազան առաքելության մեջ լինեն անեղծ ու հաստատուն՝ արձանագրելով նորանոր հաջողություններ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրերին ներկայացրեց նաեւ կրթության ոլորտում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից իրականացվող ծրագրերը՝ մասնավորապես անդրադառնալով Մայր Աթոռի հովանու ներքո գործող հանրակրթական դպրոցներին, նախակրթարանին եւ հայորդյաց տներին:

Վեհափառ Հայրապետը հետաքրքրվեց Սրբոց Թարգմանչաց վարժարանի ուսումնական գործընթացով եւ աշակերտների առօրյայով:

## Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի անդամներն

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ժողովի Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի անդամներին՝ գլխավորությամբ Ֆրանսիայի ԱԺ պատգամավոր, Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի նախագահ Ժակ Մարիլոսյանի:

Խմբի նախագահ Ժակ Մարիլոսյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց խմբի անդամներին, տեղեկություններ փոխանցեց Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի գործունեության վերաբերյալ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքն ու շնորհակալությունը հայտնեց Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի անդամներին՝ հայ-ֆրանսիական կապերի առավել զարգացման եւ ամրապնդման գործում ներդրած ջանքերի համար եւ ուրախությամբ ընդգծեց, որ խումբը Հայաստանի անկախությունից ի վեր մշտապես իր զորակցությունն ու աջակցությունն է ցուցաբերել հայ ժողովրդին: Նորին Սրբությունը նշեց նաեւ, որ հպարտության զգացում է ապրում՝ խմբի կազմում տեսնելով երեք հայորդիների:

Գարեգին Բ Կաթողիկոսը գոհունակությամբ խոսեց ֆրանսահայ համայնքի մասին, որն ակտիվորեն ներգրավված է Ֆրանսիայի կյանքին՝ շարունակելով պահպանել իր ազգային ինքնությունն ու մշակույթը, ինչպես նաեւ իր նպաստը բերելով երկրի զարգացման ու բարգավաճման գործում, եւ շեշտեց, որ շնորհիվ Ֆրանսիայում ապրող հայորդիների՝ հայ եւ ֆրանսիացի ժողովուրդների հարաբերությունները հատկանշված են առանձնակի ջերմությամբ:

Վերջում Հայոց Հայրապետը Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի անդամներին մաղթեց արդյունավետ գործունեություն:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

## Բքնիի ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Գարեգին Ա» կրթական կենտրոնում հանդիպում ունեցավ Բքնիից Մայր Աթոռ ժամանած ուխտավոր դպրոցականների հետ:

Համայնքի հոգեւոր հովիվ Արիստակես քհն. Բաղալյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց ուխտավորներին, անդրադարձավ նաեւ Բքնիի հոգեւոր կյանքին: Տեր հայրն ընդգծեց, որ պատանիների համար հանդիպումը Հայոց Հայրապետի հետ պատմական է եւ, վստահաբար, պիտի մեծ ազդեցություն ունենա նրանց կյանքում:

Այնուհետեւ պատանիները ներկայացրեցին Տասնաբանյա պատվիրանները եւ ավետարանական երանիները:

*Շարունակությունը՝ էջ 5*

# Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

## Բջնիի ուխտավորներին

*Սկիզբը՝ էջ 4*

Ողջունելով Բջնիի աշակերտների հավատավոր ոգին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր սերն ու օրհնությունը բերեց ներկաներին եւ իր գնահատանքը փոխանցեց հոգեւոր հովվին եւ ուսուցիչներին՝ դեպի Վաղարշապատի սրբավայրեր ու Մայր Աթոռ ուխտագնացություն կազմակերպելու համար:

Հայոց Հայրապետն ընդգծեց, որ ուխտագնացությունն աղոթքով ինքնամաքրվելու, դեպի Աստված, Սուրբ Եկեղեցին եւ սրբազան ժառանգությունը սերն առատացնելու ճշմարիտ ճանապարհ է: Բջնեցիներին Նորին Սրբությունը պատգամեց մշտապես գնալ ուխտի, որպեսզի ճանաչելով եւ սիրելով Աստծուն՝ զերծ մնան սխալ ընթացքներից եւ երբեք չսայթաքեն կյանքում: Հայրապետը հորդորեց ներկաներին մասնակից դառնալ եկեղեցական կյանքին, ամեն կիրակի ներկա գտնվել Պատարագին, հաճախ այցելել տարածաշրջանի վանքեր եւ եկեղեցիներ՝ իրենց աղոթքները միախառնելու այդ սրբավայրերին կենդանություն հաղորդած նախնյաց աղոթքին:

Գարեգին Բ Կաթողիկոսը նաեւ անդրադարձավ Ս. Էջմիածնի խորհրդին՝ շեշտելով, որ այն մեր ինքնությունն է, ազգային լինելիության երաշխավորը, որին կապված է հայն իր հոգով, սրտով եւ զգացումներով:

Նորին Սրբությունը, վերհիշելով բջնեցիների հետ ունեցած իր շփումները եւ զանազան տեղական ավանդույթներ, նշեց, որ Բջնին հոգեհարազատ եւ սիրելի է իր համար պատմությամբ, սրբավայրերով, աղոթական միջավայրով եւ ժողովրդով:

Այնուհետեւ Նորին Սրբությունը հարցեր ուղղեց աշակերտներին՝ թելադրելով ժրաջան լինել ուսումնառության մեջ՝ ուրախություն պարգեւելով ծնողներին, փառք եւ պատիվ բերելով իրենց ընտանիքներին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուխտավորներին խաչեր ընծայեց՝ մաղթելով Աստծո օրհնության ներքո երջանկությամբ շաղախված խաղաղ եւ անվրդով կյանք: Ուխտավորներն իրենց հերթին Նորին Սրբությանը նվիրեցին Բջնիի Սուրբ Սարգիս հնամենի եկեղեցու նկարը:

*22 հունիսի*

## Մասիս քաղաքի ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Գարեգին Ա» կրթական կենտրոնում ընդունեց Արարատյան հայրապետական թեմի Մասիս քաղաքի Ս. Գեւորգ եկեղեցու համայնքի անդամներին եւ ԱՄՆ հայոց արեւելյան թեմի Հայ օգնության ֆոնդի երեխաների աջակցության կենտրոնի սաներին՝ առաջնորդությամբ եկեղեցու հոգեւոր հովիվ Աշոտ քհն. Սաֆարյանի:

Աշոտ քահանա Վեհափառ Հայրապետին ներկայացրեց ուխտավորներին՝ անդրադառնալով նաեւ համայնքի հոգեւոր կյանքին, ինչպես նաեւ ՀՕՖ-ի Երեխաների աջակցության կենտրոնում իր կողմից իրականացվող հովվական ծառայությանը:

Ողջունելով ուխտավորներին՝ Ամենայն Հայոց Հայրապետն իր սերն ու օրհնությունը բերեց նրանց եւ իր գնահատանքը փոխանցեց հոգեւոր հովվին՝ արդյունավետ սպասավորության համար:

Նորին Սրբությունը հաստատեց, որ Եկեղեցին զորեղ է իր հավատացյալներով, եկեղեցական կյանքում նրանց ներգրավվածությամբ, ինչի լավագույն ապացույցն է դեպի Մայր Աթոռ հոգեւոր հովվի գլխավորությամբ կազմակերպված ուխտագնացությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձ կատարեց համայնքային-ծխական կյանքի կարեւորությանը՝ ուրախությամբ ընդգծելով, որ Հայոց ցեղասպանության եւ խորհրդային տարիների հետեւանքով գրեթե ամբողջությամբ կազմալուծված ծխական կյանքն այսօր վերակազմակերպվում է: Վեհափառ Հայրապետը նաեւ տեղեկություններ փոխանցեց ներկաներին՝ այս ուղղությամբ տարվող աշխատանքների վերաբերյալ:

Գարեգին Բ Կաթողիկոսն անդրադարձավ Եկեղեցու հովանու ներքո գործող խնամատար կենտրոնների, այդ թվում նաեւ Երեխաների աջակցության կենտրոնի օգտաշատ գործունեությանը՝ գնահատելով դրանցում ապաստանած մանուկների եւ պատանիների նկատմամբ դրսեւորվող սերն ու հոգատարությունը:

Նորին Սրբությունը հորդորեց ուխտավորներին շարունակել ապրել ավետարանական պատգամներով եւ տերունավանդ սիրո մեջ, զորացնել իրենց հավատքը՝ վստահություն հայտնելով, որ հասարակական կյանքում տեղ չեն գտնի անընդունելի երեւույթներ, եթե այն շաղախված լինի քրիստոնեական արժեքներով եւ սիրով: Ամենայն Հայոց Հայրապետը մաղթեց, որ Աստծո օրհնության ներքո նրանց հոգում մշտապես անպակաս լինեն հոգեւոր բերկրանքն ու ցնծությունը:

Հանդիպման ընթացքում ուխտավորների կողմից կատարվեցին Կոմիտասի «Կռունկ»-ը եւ Պատարագից «Սուրբ, սուրբ»-ը:

*23 հունիսի*

## ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի Սանտա-Կլարիտայի Ս. Սարգիս եկեղեցու ուխտավորներին՝ առաջնորդությամբ եկեղեցու հոգեւոր հովիվ Սերովբե քհն. Ալանջյանի:

Տեր հայրը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց ուխտավորներին, անդրադարձավ ծխական կյանքին, նաեւ խոսեց Հայաստան կատարած այցի տպավորություններից:

Ամենայն Հայոց Հայրապետը, իր հայրական օրհնությունը բերելով ուխտավորներին, իր գնահատանքը հայտնեց հոգեւոր հովվին՝ նման նախաձեռնության կազմակերպման համար: Նորին Սրբությունը նշեց, որ ուխտագնացությունը հնարավորություն կընձեռի Ս. Սարգիս եկեղեցու հավատացյալներին ներշնչվելու հայրենիքով, զորանալու իրենց նախնյաց հավատքով ու մշակույթով:

Գարեգին Բ Կաթողիկոսը գոհունակությամբ ընդգծեց, որ հայրենիքի անկախության պայմաններում այսօր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին վերազարթոնք է ապրում եւ վերականգնում տերունավանդ իր առաքելությունը տարբեր ոլորտներում, հաստատեց, որ հայ եկեղեցականների նվիրյալ սպասավորության շնորհիվ բազում հոգեշահ իրագործումներով պայծառանում է ժողովրդի հոգեւոր կյանքը:

Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքը բերեց ուխտավորներին, որ լինելով ժառանգները Հայոց ցեղասպանությունը վերապրած եւ ԱՄՆ-ում հաստատված հայորդիների՝ կարողացել են պահպանել իրենց մայրենի լեզուն եւ կերտել ազգային կյանքը:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը հետաքրքրվեց համայնքի կյանքով ու գործունեությամբ:

*26 հունիսի*

## Վիրահայ ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Վիրահայոց թեմի Ախալցխայի ուխտավորների հետ:

Ախալցխայի հոգեւոր հովիվ Հակոբ աբդ. Սահակյանը Նորին Սրբությանը տեղեկացրեց ուխտագնացության ծրագրի մասին՝ ջերմ ընդունելության համար շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին: Հայր սուրբը նաեւ ուխտավորների սերն ու զորակցությունը փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ մտահոգություն հայտնելով եկեղեցական կյանքի վերջին օրերի զարգացումների առնչությամբ:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Հայրապետը, իր սերն ու օրհնությունը փոխանցելով ուխտավորներին, նշեց, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը մշտապես սիրով է ընդունում ուխտի եկած իր զավակներին:

Նորին Սրբությունն ընդգծեց, որ հովվապետական ացելությունների ժամանակ մշտապես տեսել է ջավախահայության զորավոր հավատքը, ազգային նկարագիրը կերտելու ջանքն ու եռանդը, ինչպես նաեւ անսակարկ սերն ու նվիրումը համայն հայության հոգեւոր կենտրոնի նկատմամբ: Վեհափառը նշեց, որ Ջավախքի հայությունն ամուր կամուրջ է հանդիսանում հայ-վրացական բարեկամական հարաբերություններում:

Հայոց Հովվապետը հորդորեց ուխտավորներին շարունակել ապավինել հայ ժողովրդի սրբություն սրբոցին՝ Սուրբ Էջմիածնին՝ մշտապես իրենց հոգում վառ պահելով պայծառ գալիքի հույսը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ ամենողորմ Տերը նորոգի նրանց ուխտը եւ Իր շնորհներն առատացնի նրանց կյանքում:

## Ավստրալիայի Եկեղեցիների հոգեւոր առաջնորդներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ավստրալիայի Եկեղեցիների հոգեւոր առաջնորդների էկումենիկ պատվիրակության անդամներին՝ գլխավորությամբ պատվիրակության նախագահ, Սիդնեյի Բյուզանդական Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ, արքեպիսկոպոս Ռոբերտ Ռաբաթի եւ ուղեկցությամբ Հնդկաստանի եւ Ծայրագույն Արեւելքի հայրապետական պատվիրակ, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն եպս Նաջարյանի:

Ողջունելով քույր Եկեղեցիների հոգեւոր առաջնորդներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ հաստատեց, որ պատվիրակության այցելությունը Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին լավագույն վկայությունն է Եկեղեցիների միջեւ առկա ջերմ հարաբերությունների: Վեհափառ Հայրապետն ուրախությամբ արձանագրեց, որ Ավստրալիա կատարած հովվապետական այցի ժամանակ ականատես է դարձել հայ առաքելական եւ քրիստոնեական մյուս համայնքների միջեւ առկա սիրո, համերաշխության եւ սերտ համագործակցության: Գարեգին Բ Կաթողիկոսը հույս հայտնեց, որ Ավստրալիայի Եկեղեցիների առաջնորդների այցը Մայր Աթոռ կնպաստի այդ կապերի առավել ամրապնդմանը:

Իր հերթին արքեպիսկոպոս Ռոբերտ Ռաբաթն էկումենիկ պատվիրակության անդամների անունից ընթերցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղված ողջույնի խոսքը, որում հոգեւոր առաջնորդները, անդրադառնալով Հայոց Եկեղեցու կարեւոր առաքելությանը, նաեւ իրենց զորակցությունը հայտնեցին հայ ժողովրդին եւ Հայոց Եկեղեցուն՝ Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման գործում:

Վերջում Վեհափառ Հայրապետը հյուրերին մաղթեց Աստծո օգնականությունն ու առաջնորդությունը, որպեսզի անսասանորեն իրագործեն իրենց սրբազան առաքելությունը՝ Քրիստոսի Եկեղեցու պայծառության եւ շենացման համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր եղբայրական սերն ու ողջույնները փոխանցեց քույր Եկեղեցիների հոգեւոր պետերին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը եւ միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Շահե ծ. վրդ. Անանյանը:

***ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ***
***ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ***

# ԱՂՈԹՔԻ ԲՈՒԺԻՉ ՈՒԺԸ

**Բան ԽԳ**

**Բ**

*Սպեղանիների կարիք չես զգում դու*
*Հոգուս վերքերին փաթաթաններ*
*պատրաստելու համար,*
*Ո՛չ ժամանակի, ո՛չ միջնորդի*
*եւ ո՛չ էլ երկարաձիգ օրերի,*
*Ո՛չ փոփոխական դեղեր տալու*
*եւ ո՛չ անդամահատման,*
*Ո՛չ էլ խարելու, վիրահատության,*
*Եվ այլ երկրավոր դարմանումների,*
*Որոնք ենթակա են հաճախ վրիպանքի*
*եւ ամենասխալ տարակուսության:*

Այսօր ժամանակակից բժշկությունն ավելի հաճախ է անդրադառնում մարդու հոգեւոր ներաշխարհին՝ կարեւորելով նրա դերը հիվանդի ապաքինման հարցում: Վերջին շրջանում տարբեր գիտնականների կողմից իրականացված հետազոտությունները փաստում են հիվանդության եւ ոգեղենության միջեւ առկա ռեալ կապի մասին: «Հիվանդություն»-«Աստված»-«Ապաքինում»: Ինչպե՞ս է գործում այս մեխանիզմը: Իրականություն, հրաշք թե՞ ներշնչանք:

Կարելի է ասել, որ դասական բժշկությունը ներկայումս գտնվում է ստագնացիոն վիճակում: Բժշկական հաստատություններում սովորեցնում են հիվանդներին մոտենալ միայն գիտական տեսանկյունից՝ հիմնված նեյրոկենսաբանական, դեղագիտական, համաճարակային եւ այլ գիտական մեթոդներով ստացված ինֆորմացիայի վրա: Սակայն զուտ գիտական մեթոդոլոգիայի օգտագործմամբ հնարավոր չէ բացահայտել հիվանդության բուն պատճառը (օրինակ՝ հիվանդին համակած տխրությունը, նրա ունակությունների, կարողությունների կորուստը): Դասական բժշկությունը հիմնականում զբաղվում է անորոշ ծագման, անհոգի մարդու բուժմամբ: Առանձնացնելով մարմինը հոգուց եւ մտքից՝ բուժում են, փաստորեն, մարդու միայն մեկ երրորդը, ինչը լիարժեք արդյունքի չի բերում: Մարդը հոգեւոր էակ է, անհատականություն՝ իր «ես»-ի բոլոր առանձնահատկություններով. պետք է ուսումնասիրել նաեւ նրա էության այս կողմը, քանի որ շատ դեպքերում ամեն ինչ գալիս է մարդու ներաշխարհից: Գրիգոր Տաթեւացին իր աշխատություններից մեկում նշել է, որ կան հիվանդություններ, որոնք պետք է բժիշկները բուժեն, սակայն որոշ հիվանդությունների դեպքում անհարժեշտ են հույս, հավատ, սեր եւ Աստծո գիտությունը: Հավատը դրական ազդեցություն է ունենում նույնիսկ անբուժելի համարվող հիվանդությունների դեպքում:

Հիվանդությունը փորձություն է: Բայց ինչո՞ւ է այն մեզ տրվում: Պետք է սա հասկանալ, չվախենալ, փոփոխության գնալ ու անգամ սիրել հիվանդությունը, որպեսզի այն թողնի քեզ:

Հավատքի առկայությունը պարտադիր է ինչպես հոգեկան, այնպես էլ ֆիզիկական առողջության համար, քանզի մենք հոգու եւ մարմնի ամբողջություն ենք: Առաջին հայացքից մարմնական թվացող, բայց իրականում հոգեմարմնական՝ ինֆարկտ, ինսուլտ, ստամոքի խոց եւ մի շարք այլ հիվանդությունների խորացմանը նպաստում են մարդու հոգեկան աշխարհը, սթրեսները: Հոգին է տալիս մարմնին ուժ եւ կենսունակություն:

Այսօր բժշկությունն ավելի ու ավելի է կարեւորում հավատի դերը մարդու ապաքինման հարցում: Գիտնականներն իրենց հետազոտությունների արդյունքում եկել են այնպիսի եզրահանգումների, որոնք եւս մեկ անգամ ապացուցում են հավատի, աղոթքի եւ մարդու միջեւ գոյություն ունեցող ուժեղ կապը: Ամերիկացի նեյրոգիտնական Էնդրյու Նյուբերգը նշել է, որ հավատն առ Աստված շատ կարեւոր է մարդու հոգեկան եւ ֆիզիկական առողջության համար: «Ինչքան ավելի խոր հավատաք Աստծուն, այնքան ձեր ուղեղն ավելի առողջ կլինի»,- ասել է նա: Գիտնականը փաստել է նաեւ, որ աղոթքն ուժեղացնում է իմունային համակարգը, ինչը նպաստում է հիվանդության հաղթահարմանը: Բացի այդ, այն ավելացնում է դոպամինի քանակն օրգանիզմում, ինչը բերում է տրամադրության բարձրացման եւ լավ ինքնազգացողության: Վերջին շրջանում հետազոտությունների արդյունքում պարզվել է նաեւ, որ աղոթելիս փոխվում է նույնիսկ արյան բաղադրությունը:

Այս ամենը վկայում է այն մասին, որ «ներշնչանք» բառն այս պարագայում տեղին չէ օգտագործել, քանի որ ներշնչանքի հիմքում ընկած է «պլացեբո» էֆեկտը, իսկ ԽՈՍՔի, հավատի կազդուրիչ ազդեցությունն ունի գիտական բոլոր հիմքերը: Այստեղ տեղին է նշել նաեւ եկեղեցական զանգերի բուժիչ ազդեցության մասին: Օրինակ՝ եկեղեցական զանգերի ձայնային ելեւեջները ոչնչացնում են օդում առկա մանրէները:

Երբ դիտում ենք մարդուն որպես Աստծո ստեղծագործություն, ամեն ինչ՝ կապված հիվանդությունների եւ դրանց բուժման հետ, ավելի ակնհայտ է դառնում: Հիվանդության պատճառները հոգեւոր տեսակետից պարզ են: Մարդը կարող է հիվանդանալ հոգեւորի թուլացումից, ձեւափոխումից, բացակայությունից: Ցանկացած հիվանդություն փոքրիկ ազդանշան է մարդու համար, որը հուշում է իր հոգեւոր ճանապարհի շեղման մասին: Մեղք-հիվանդություն. ահա թե որ կապն է այստեղ գործում: Ամբողջ բուժման սկզբունքում ընկած է մեղքի զղջանքը: Եթե կա մեղք, ապա մարդը պետք է ունենա իր մեղքի գիտակցումը, զղջանքը եւ արդյունքում՝ ազատագրումը: Հենց այս սկզբունքի վրա է հիմնված Նարեկացու «Մատյան ողբերգության» («Նարեկ») աղոթագրքի բուժիչ ազդեցությունը տարբեր հիվանդությունների ժամանակ:

**Բան ԻԷ**

**Բ**

…Մեղա՛ աննվազ լույսիդ վայելմանն,
նենգողս մեղա՛…

**Գ**

…Մեղա՛, որ եղա ես հանձնապաստան,
հիմարս մեղա՛.
Մեղա՛, որ կյանքիդ դրժողը եղա,
իսկ եւ իսկ մեղա՛…

Անցնելով «Նարեկի» բժշկարար հատկություններին՝ պետք է նշել, որ «Նարեկը» մեր ժողովրդին հայտնի է եղել դարեր ի վեր՝ սկսած 10-րդ դարից: Հայտնի է, որ նախկինում «Նարեկը» դնում էին բարձի տակ, կարդում էին հիվանդի գլխին, եւ հիվանդությունը ետ էր նահանջում: «Նարեկը» դարեր շարունակ մեր ժողովրդի համար եղել է պաշտամունքի առարկա՝ որպես աղոթագիրք եւ բժշկարան: «Նարեկի» բուժական եւ սպեղանի հատկությունների մասին շատ է պատմվել:

Իր «Մատյան ողբերգության» աղոթագրքի առաջին էջում Նարեկացին գրել է.

*Եվ արդ միայն դո՛ւ կարող ես գտնել*
*հրաշագործ դեղեր,*
*Ի կյանք կոչելու հոգիներն ամեն՝*
*մատնված վարանման եւ տարակույսի:*

Հայտնի հայագետ, լեզվաբան, գրականագետ Մանուկ Աբեղյանը Նարեկացուն համարում էր աշխարհի ամենահին հոգեբույժը, իսկ Մատյանը՝ աշխարհի ամենահին հոգեբուժության գիրքը: Թորգոմ եպիսկոպոս Գուշակյանը (Պատրիարք Երուսաղեմի), ով նաեւ «Նարեկի» մեկնիչներից է, գրել է. «Նարեկը հայության խղճմտանքին ամենէն ջինջ աղաղակը, ամենէն ապահով եւ մաքուր միջոցն է, տալու համար կազդոյրն ու սփոփանքը, որոնց կարօտն ունինք ամենքս, հոգեպես եւ ազգովին կրուած ահավոր եւ աղետալի այնքան մրրկումներէ ետքը: Մեր խոցված հոգիներուն ամենէն անոյշ բալասանը, մեր ազգային զգացումին ամենէն կազդուրիչ դեղն է ան»:

«Նարեկը» բժշկարան է, որով կարելի բուժել ցանկացած մարդու՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից: Նարեկաբուժությունն իր իմաստով «Մատյան ողբերգության» աղոթագրքի վերծանումն է, իսկ այն՝ «Մատյանը», Աստվածաշնչի ավելի ըմբռնելի, հասկանալի մեկնությունը:

«ՄԻ ԲԱՌ ԱՍԱ, ՈՒ ԿԲԺՇԿՎԵՄ»
*(«Նարեկ»)*

Ցանկացած հիվանդության ժամանակ մարդը կարիք ունի հոգու մաքրման: «Նարեկը» տալիս է մեզ այդ հնարավորությունը:

Դասական բժշկության համար մինչ օրս գոյություն ունեն մի շարք անբուժելի եւ դժվար բուժելի հիվանդություններ, որոնք երիտասարդանում, շատանում են: Բայց դա չի նշանակում, որ այլեւս ելք չկա: Աղոթքով հնարավոր է բուժել ցանկացած հիվանդություն, քանի որ բուժում է տվյալ աղոթքի զորությունը եւ մարդու հավատքը: Աղոթքը երկնային միջնորդ է, որը կապում է մարդուն Աստծո հետ, իսկ Աստծո համար անհնար եւ անբուժելի հիվանդություններ չկան:

Եթե փոխվել է հոգու աստվածային պատկերը, ապա այն պետք է նորից գա իր նախնական վիճակին՝ ապրելով լիարժեք, ուրախ, առողջ, կյանքով լի, լցված սիրով, հույսով եւ հավատով առ Աստված: Այդ ճանապարհը կա եւ միշտ եղել է յուրաքանչյուրի համար, եւ մենք՝ մոլորվածներս, կարող ենք փնտրել եւ գտնել այն հոգու աչքերը բացող «Նարեկի» լուսավոր խոսքի շնորհիվ:

«Նարեկաբուժություն» եզրը կյանքի կոչվեց եւ կարողացավ շարժել շատ մարդկանց միտքը, սիրտը եւ հոգին: Եվ սա է պատճառը, որ ուշադրությունը «Նարեկի» նկատմամբ գնալով ավելի մեծանում է:

***Արմեն ՆԵՐՍԻՍՅԱՆ***
***Հոգեթերապեւտ, նարեկաբույժ***

# Սսի 1243 թ. Բ ԺՈՂՈՎՆ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

*Սկիզբը՝ էջ 3*

Մինչեւ կանոնի բնութագրմանն անցնելը՝ ուզում ենք նշել, որ քորեպիսկոպոսները եպիսկոպոսների օգնականներն են, որ երբ եպիսկոպոսը քաղաքի մեջ է գործում, հովվում ու դատում, դրանք էլ վիճակի գյուղական շրջանների մեջ նույն գործերը կատարեն: Մյուս կողմից հայտնի է, որ հին ժամանակներում դատական գործերից շատերը եկեղեցական ատյան են հանվել, ինչպես մեզ են տեղեկացնում բազմաթիվ կանոններ (տե՛ս Օրմանյան Մ., նույն տեղում): Հիմա, անդրադառնալով կանոնի առաջին մասին, պետք է նշել, որ եպիոկոպոսի՝ տարին երկու անգամ իր թեմում շրջելու հրամանը բոլորովին էլ պատահական չէր եւ բնականաբար ուներ իր նախահիմքերը: Դա նշանակում է, որ եպիսկոպոսը չի կատարել իր պարտականությունը եւ չի շրջել իր թեմում: Հնարավոր է, որ նա չի հասցրել բոլոր վայրերում շրջել կամ էլ թերացել է: Այդ պատճառով էլ կանոնի երկրորդ հատվածը հրամայում է քորեպիսկոպոսներ նշանակել, որոնք պետք է օգնեին եպիսկոպոսին՝ շրջելով թեմի այն բոլոր վայրերում, որտեղ չի հասցրել շրջել եպիսկոպոսը: Բայց պետք է նաեւ փաստել, որ գուցե դա կապված չէր եպիսկոպոսի զբաղվածության հետ, այլ նա ընդհանրապես անտեսել է իր այդ պարտականությունը եւ չի հետաքրքրվել իր ժողովրդի բարեկեցությամբ, չի լուծել իր հոտի հոգեւոր խնդիրները: Նաեւ կանոնը սահմանում է, որ ընտրված քորեպիսկոպոսները լինեն երկյուղած եւ ոչ ագահ՝ բացասելու նրանց անձնական շահերը եւ ապահովելու նրանց հետաքրքրվածությունը՝ իրենց հոտով ու վերջինիս խնդիրներով: Ինչպես տեսանք, սա եւս մի շատ կարեւոր խնդիր էր հայ եկեղեցական իրականության մեջ, որն իր լուծումը ստացավ Սսի 1243 Բ ժողովի ԺԲ կանոնով:

**ԺԳ.** «Ծեր եւ գիտուն խոստովանահայրեր պետք է կարգեն, որ ամեն կիրակի առանց փողի խոստովանության կանչի շաբաթվա հանցանքների համար, եւ քահանաները խոստովանահայրերի հրամանով իրենց ժողովրդի արժանավորներին պետք է հաղորդեն առանց դրամի, նույնպես եւ հիվանդներին առանց դրամի պիտի հաղորդեն» ( Կիրակոս Գանձակեցի, նույն տեղում):

Սուրբ Հոգին տանում է մարդկանց դեպի Քրիստոս Աստծո խոսքի եւ սուրբ խորհուրդների միջոցով, որպեսզի մեղավորը թողություն ստանա իր մեղքերի համար ու նորոգ կյանք առնելով՝ ձգտի դեպի երանություն: Ուրեմն՝ Սուրբ Հոգու առաջին գործն է, որ թողնում է մեղավորին փրկության ճանապարհին եւ ապա առաջնորդում դեպի իսկական փրկություն: Այդ փրկության ճանապարհն է, որով մարդ հեռանում է իր մեղքերից եւ թողություն խնդրում (տե՛ս Տեր-Միքելյան Ա., նշվ. աշխ., էջ 417): Զղջումին անմիջապես հաջորդող քայլը խոստովանությունն է: Եվ ապաշխարության հիմնական սկզբունքը մեղանչականության խոստովանությունն է: Եվ, ինչպես տեսնում ենք, այս կանոնը սերտորեն աղերսված է աստվածադիր այս խորհրդին եւ նրա կատարմանը: Եվ կանոնը հրամայում է խոստովանահայրեր կարգել, որ ամեն կիրակի խոստովանեցնեն շաբաթվա հանցանքների համար: Կանոնի առկայությունն այս անգամ եւս փաստում է, որ այսպես չի եղել, հակառակ դեպքում այս կանոնը չէր ընդունվի եկեղեցական այս ժողովում: Եվ խոստովանությունից հետո նոր պետք է արժանավորները հաղորդություն սատանային: Հավատացյալի ճշմարիտ միավորությունը Քրիստոսի հետ վերջնականապես իրագործվում է Քրիոստոսի կենդանարար մարմնի եւ արյան հաղորդությամբ: Այդ պանծալի միավորության համար էր, որ Քրիստոս սահմանեց Եկեղեցու այդ սուրբ խորհուրդը (նույն տեղում, էջ 439):

Օրմանյան սրբազանը նշում է, որ սա բոլորովին նոր դրություն էր, որ լատիններից էլ փոխանցված չէ, անցյալի մեջ էլ հիշված չէ եւ ապագայի մեջ էլ հետք չի թողել (Օրմանյան Մ., Բ, ս. 1904): Գլխավորապես նկատելի է կրկին ու կրկին առանց դրամի անելու հրամանը, թերեւս դրամ շորթելու մի ձեւ էր, եւ այս կանոնն ուզում է կարգի բերել եւ հրամայում է, որ խոստովանահայրերը, որ ծեր եւ գիտուն քահանաներից լինեն, եւ որ գործողությունն առանց դրամի կատարվի: Կարծում ենք՝ այստեղ հարկ է նշել, թե ինչ մոլորության մեջ է ընկնում Հռոմեական Եկեղեցին այս խորհրդի կատարման ժամանակ: Հռոմեացի քահանայապետերը կարծում են, որ իրենք կարող են թեթեւացնել մեղավորի պատիժը՝ նրա հատուցման փոխարեն ներում շնորհելով «յանսպառ գանձուց վաստակոց Քրիստոսի եւ սրբոց՝ աւանդելոց յեկեղեցւոջ»: Եվ այդպիսով՝ նրանք խոստովանողներին շնորհում էին ապաշխարական թղթեր՝ բավական մեծ գումարի դիմաց, եւ ներում նրանց մեղքերը:

*Շարունակելի*

***Գոռ ԳԱԼՍՏՅԱՆ***

# ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽՈՐՔԵՐԸ ՀԵՏԱԶՈՏՈՂ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻՆ

Վաստակաշատ պատմաբան, պրոֆեսոր, Երեւանի պետական համալսարանի, Վազգենյան եւ Գեւորգյան ճեմարանների, Բեյրութի Համազգային բարձրագույն դասընթացների բարձրակարգ դասախոս, հազարավոր սաներ կրթած ու ազգային հոգեւոր-բարոյական բարձր չափանիշներով դաստիարակած երանելի ուսուցչապետ Պետրոս Հովհաննիսյանը (1944-2016 թթ.) բարձր եւ մնայուն անուն է նաեւ գիտության անդաստանում: Նրա գիտական ժառանգության ընտրանին լույս է տեսել վերջերս՝ «Հայագիտակ» հրատարակչության կողմից՝ «Պատմագիտական ուսումնասիրություններ» վերնագրով:

Գրքի առաջաբանում («Գիտության եւ կրթության մեծ նվիրյալը») ճանաչված գրահրատարակիչ Ա. Իսոյանը բացառիկ նրբագծերով է ներկայացնում Պ. Հովհաննիսյանի գրքասիրությունն ու գրքապաշտությունը՝ իրավացիորեն նշելով, որ գիտնականն իր տունը վերածել էր գրքի անառիկ ամրոցի:

Գրախոսվող սույն ժողովածուն աներկբա վկայում է, որ Պ. Հովհաննիսյանի գիտական նախասիրությունների եւ հետաքրքրությունների շրջանակը բավական լայն էր, տարողունակ եւ բազմաբովանդակալից:

Նախ սկզբից եւեթ ընդգծենք, որ Պ. Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների առանցքում մեծն Մովսես Խորենացին է՝ հայ դասական պատմագրության հիմնադիրը, չափանիշն ու ուղենիշը:

Առհասարակ հայ պատմիչների կյանքի, գործի եւ գործունեության վերաբերյալ նրա վերաբերմունքը հասնում էր գրեթե մի սրբազան երկյուղածության: Նա հրաշալի պատկերացնում, գնահատում եւ իմաստավորում է միջնադարի հայ պատմիչների թողած գրական ժառանգության արժեքը՝ հայության մտավոր եւ հոգեւոր մշակույթի վերելքի եւ առաջադիմության գործում: Ահա թե ինչու Պ. Հովհաննիսյան հայ գիտնականն իր կյանքի մի զգալի մասը նվիրել էր հայ պատմիչների եւ պատմագիտական մտքի խորքային ուսումնասիրությանը: Նրա գրչի ներքո նորովի են բացահայտվել միջնադարյան Հայաստանի եւ Կիլիկիայի պատմագիտական մտքի երեւելի դեմքերը՝ Կորյուն Վարդապետը, Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Եղիշե վարդապետը, Ղազար Փարպեցին, Սեբեոսը, Հովհան Մամիկոնյանը, Ղեւոնդ վարդապետը, Հովհաննես Դրասխանակերտցին, Անանուն պատմիչը, Թովմա Արծրունին, Արիստակես վարդապետ Լաստիվերտցին, Դավիթ Ալավկաորդին:

Իհարկե, սույն պատմիչների շարքում նա առանձնակի ուշադրություն է հատկացրել պատմահայր Մովսես Խորենացուն, որի ցայտուն վկայությունն են նաեւ սույն ժողովածուի մեջ զետեղված գործերը (Մովսես Խորենացու «Հայոց պատմության» աշխարհաբար առաջին թարգմանությունը, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ֆրանսերեն թարգմանությունները, Հենրիկոս Բրենները եւ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» լատիներեն համառոտագրված առաջին թարգմանությունը, Մովսես Խորենացին օտար թարգմանություններով): Միանգամայն տեղին եւ իրավացի է նրա խորքային այն դիտարկումը, ըստ որի՝ հայ հին հեղինակներից եւ ոչ մեկի երկասիրությունն այնքան խոր ազդեցություն չի թողել հայ պատմագիտական ու հասարակագիտական մտքի վրա, որքան Խորենացու «Հայոց պատմությունը», որով կրթվել ու դաստիարակվել են բազում սերունդներ:

Հայ պատմիչներին նվիրված նրա գործերն աչքի են ընկնում սկզբնաղբյուրային վավերագրերի քաջ իմացությամբ, պատճառահետեւանքային կապերի խոր ընկալումով, պատմահամեմատական մեթոդների ու բնութագրերի հստակ կիրառումով:

Պետրոս Հովհաննիսյանն իր գիտական հետաքրքրությունների «թիրախ» ընտրեց ոչ միայն միջնադարյան շրջանի հայ պատմիչներին, այլեւ նրա գիտական պրպտումների հոլովույթում հայտնվեցին նոր եւ նորագույն շրջանի հայ պատմաբանները (Ղեւոնդ Ալիշան, Աստվածատուր Խաչատրյան (Խաչ), Ավետիս Պերպերյան, Հակոբ Մանանդյան, Հովհաննես Հակոբյան (Վարդ Շահենի), Գառնիկ Գյոգալյան, Ռուբեն Աբրահամյան, Գրիգոր Միքայելյան, Հայկազ Ժամկոչյան, Աշոտ Աբրահամյան, Հրանտ Արմեն, Հակոբ Զորյան, Աշոտ Հովհաննիսյան): Սույն պատմաբանների կյանքի եւ գործի ուսումնասիրությանն է նվիրված ժողովածուի երրորդ բաժինը: Փաստառատ դիտարկումներով ու անաչառ կեցվածքով նա կերտել է մեզանում հայտնի եւ քիչ հայտնի այս պատմաբանների գիտական անեղծ դիմանկարները:

Չորրորդ բաժինն ամբողջությամբ նվիրված է 20-րդ դարի հայ ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցին: Վերջինիս բնութագրում է որպես վիթխարի անհատականության եւ հայ բյուզանդագիտության հիմնադրի: Մի շարք հոդվածներ («Տիգրան Մեծի գործունեության լուսաբանումը Նիկողայոս Ադոնցի աշխատություններում», «Մովսես Խորենացի եւ Նիկողայոս Ադոնց», «Մարզպան Վասակ Սյունեցու գործունեության վերագնահատման Նիկողայոս Ադոնցի տեսությունը», «Նիկողայոս Ադոնցի «Հայոց քննական պատմության» ճակատագիրը», «Նիկողայոս Ադոնցի կրոնագիտական ժառանգությունը», «Նիկողայոս Ադոնցի նամականին», «Նիկողայոս Ադոնցի կենսապատումների արդիականությունը» եւ այլն) հիմնավոր խորությամբ ներկայացնում են նշանավոր հայագետի ստեղծագործական ճանապարհի կարեւորագույն փուլերն ու հանգրվանները: Մեզանում ոչ ոք այդպես չի խորացել Ադոնցի ստեղծագործական, գիտական ժառանգության գաղտնիքների մեջ, ինչպես դա կարողացել է անել Պ. Հովհաննիսյանը:

Ժողովածուի հինգերորդ բաժինը ներկայացնում են Հայ Առաքելական Եկեղեցուն եւ նրա վաստակառու գործիչներին նվիրված ուսումնասիրությունները (Փիլիպոս Ա. Աղբակեցի, Վահրամ եպիսկոպոս Մանկունի, Կարապետ Տեր-Մկրտչյան, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գեւորգ Կոստանդնուպոլսեցի, Սուքիաս արք. Պարզյանց, Տ. Սահակ վրդ. Ամատունի, Վահան ծ. վրդ. Բաստամյանց, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Մակար Ա Թեղուտցի Տեր-Պետրոսյան, Տ. Տիրայր արք. Տեր-Հովհաննիսյան):

Հատընտիրի վեցերորդ բաժնում՝ «Մատենագիտություն» խորագրի ներքո, ներկայացված են գիտնականի մատենագիտական գործերը՝ նվիրված Մ. Խորենացուն, հայկական հարցին եւ Հայոց ցեղասպանության պատմությանը, Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կյանքին եւ գործունեությանը եւ այլն: Այս ամենով հանդերձ, այնուամենայնիվ, պետք է հատուկ դրվատանքով ու արժեւորումով արձանագրենք, որ Պետրոս Հովհաննիսյան գիտնականի եւ ուսուցչապետի լավագույն գործերը վերաբերում են հայ ազգային-ազատագրական շարժման ուսումնասիրմանը, կարեւորմանն ու իմաստավորմանը: Հայ պատմագիտության էջերում բազմիցս գրվել է հայ ազատագրական շարժման մասին, եւ այդ ծավալուն գրականության մեջ Պ. Հովհաննիսյանը կարողացել է ասել իր թարմ խոսքն ու հաստատել իր ասելիքը: Անհագ հետաքրքրությամբ է կարդացվում «Հայ ազատագրական շարժումները XV դար - XVII դարի վերջ» ստվարածավալ ուսումնասիրությունը, որում նա նորովի հայացք է նետում հայ ազատագրական շարժման նախաքայլերին եւ նախադրյալներին, համոզիչ հիմնավորումներով ներկայացնում հայ ազատագրական շարժման շուրջ դարերով ձեւավորված լեգենդը:

Այս ամենին որպես ամփոփում հավելենք, որ ընթերցողի գրասեղանին դրված տաղանդաշատ, բազմաշնորհ պատմաբան, պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանի տասնամյակներ շարունակ կատարած պրպտուն ուսումնասիրությունների ընտրանին աչքի է ընկնում գիտական բարձր մակարդակով: Ժողովածուում ընդգրկված նյութերը, հոդվածները, ակնարկներն ու ուսումնասիրությունները պերճախոս կերպով վկայում են նրա հեղինակի՝ բազմադարյան հայոց պատմության տարբեր փուլերի, պատմաշրջանների եւ բազմապիսի երեւույթների խորքային ու բացառիկ իմացության մասին:

Սույն հատընտիրը, իրոք, մի յուրահատուկ հուշարձան է կյանքին, ցավոք, արդեն հրաժեշտ տված հայրենասեր ու հայրենանվեր մարդու, տքնաջան գիտնականի եւ անկրկնելի ուսուցչի հիշատակին:

***Աշոտ ՄԵԼՔՈՆՅԱՆ***
***Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս***

***Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***
***Պատմական գիտ.թեկնածու***

# ՎԱՎԱՅԻՆ ՎՌՎՋՎՐԿՆԵՐ

**Հայր Անդրեաս ԿՈՆԱՆՈՍ**

Կյանքում ամեն ինչ իր գինն ունի, այդպես չէ՞: Մեր ընտրություններն իրենց գինն ունեն: Դրանց մասին մտածում ես որոշում կայացնելուց առաջ եւ ապա վերցնում քո ընտրած խաչը, ինչ էլ որ լինի: Սա ասում եմ, սիրելի՛ ընկերներ, քանի որ հիմա, երբ ամառ է, ու երբեմն անտանելի շոգ է լինում, մարդիկ ինձ հարցնում են. «Ինչպե՞ս ես դիմանում: Ինչպե՞ս ես դիմանում այս շոգին սեւ սքեմով, որ այդքան տաքություն է ներքաշում իր մեջ»: Ես էլ ասում եմ. «Այո՛, ներքաշում է ամբողջ տաքությունը, բայց միաժամանակ՝ նաեւ ամբողջ լույսը: Սեւն այն գույնն է, որն իր մեջ է առնում ամբողջ լույսը, բոլոր գույները: Բացի այդ, սա մի որոշում է, որը մարդ կայացնում է կյանքում, ինչպես նաեւ՝ սովորություն. համբերում ես եւ սովորում դրան: Եվ լուծումը բոլոր շորերը հանելու մեջ չէ, քանի որ ինչքան էլ թեթեւացնես շորերդ, եթե շատ շոգ է, չես դիմանա, կտանջվես շոգից, եւ դա անտանելի է մարմնի եւ հոգու համար: Բայց սքեմը նաեւ հետեւյալ լավ կողմն ունի. քանի որ թեւքերը լայն են, քամին ներս է մտնում, մեղմ հով փչում քրտնած մարմնի վրա, ու զովանում ես մի քիչ:

Եվ հետո, մտածում եմ, ի վերջո, այո՛, անշուշտ, շոգն ու հովն արտաքին երեւույթներ են, շոգ է, ուզես թե չուզես, քեզ նեղում է, անհանգստություն պատճառում, չես կարողանում հանգիստ շնչել, մարմինդ թուլացնում է, ոչինչ չես կարող անել, մտածել, ինչպես ձմռանն է լինում, երբ ավելի կենտրոնացած ես, ճիշտ է, բայց դրանում նաեւ մեր մեղքը կա: Կան մարդիկ, որ Աստծու դեմ սկսում են կռիվ տալ. «Այս ի՞նչ է անում Աստված, ինչո՞ւ է մեզ այս վիճակի մեջ դնում» եւ այլն: Բնության այս ոչ նորմալ վիճակը, շեղվածությունը, սիրելի՛ ընկերներ, շատերդ, որ տեղեկացված եք, կարդում եք լուրեր, վավերագրական ֆիլմեր նայում եւ այլն, ինձնից էլ լավ գիտեք, որ նաեւ մեր սեփական ընտրությունների հետեւանք է: Բնությունը պատասխանում է մեր տված հարցերին: Նրան հարցնում ենք. «Մինչեւ ո՞ւր կարող ենք հասնել: Մինչեւ ի՞նչ աստիճանի կարող ենք քեզ կեղեքել, կործանել», եւ հնարավորինս վատ ենք վերաբերվում բնությանը: Եվ ապա այս աշխարհը, որն Աստված ստեղծել է ենթարկվելու համար, ներդաշնակ լինելու համար, որն Աստված ստեղծել է մեզ ուրախություն պատճառելու եւ երկրային դրախտ լինելու համար, վրեժ է լուծում: Ինչո՞ւ:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ (1809-1848)

*Սկիզբը՝ էջ 3*

Արդեն ընդգծել ենք Աբովյանի կարծիքը ճոխ ու ճկուն, հարուստ ու համեղ մեր «կորած գանձի»՝ գրաբարի մասին, որը «մեր վատ բախտիցը» դարձել էր անմատչելի ու անհասկանալի: Այդ անբնական վիճակն արգելակում էր հենց ազգի լուսավորության ու մատաղ սերնդի հայեցի դաստիարակության գործը, ոչնչացնում սերունդների գեղագիտական ճաշակը, նրանց զրկում հայրենիքի ու ժողովրդի, սեփական եւ ուրիշների պատմությունն ու մշակույթը իմանալու մարդկային պարտականությունից: «Էս հո էս՝ Եվրոպիումն էլ որ չէի կարդում բազի գրքերում, թե Հայ ազգը պետք է՝ որ սիրտ ունեցած չըլի, որ էնքան բաները գլխովն անց են կացել, մեկ մարդ էլ ա չի դուս եկել, որ մեկ սրտի բան գրի, ինչ կա՝ եկեղեցու վրա յա, Աստծու ու սրբերի, բայց հեթանոս Հոմերի, Վիրգիլի, Սոֆոկլեսի գրքերը՝ էրեխեքն էլ գլխատակերին ունին, չունքի բոլոր աշխարհի բաներ են: Թե ասեի՝ բոլոր եվրոպացիք են անխելք, անհավատ, որ Աստծու բանը թողած էս ծռտի մռտի բաների հետ են ընկել, հիմարություն կըլեր: Թե չէ մեր Նարեկը թողած, ի՞նչպես էին նրանք էն գրքերին հավանում» *(Աբովյան Խ, Երկեր, «Հայ դասականների գրադարան» մատ., Եր., 1984, էջ 7)*:

Հեղինակն այս հարցադրմանն ինքն էլ տվել է հստակ պատասխան՝ բացատրելով պատճառը. «չունքի սրտի բաներ են մեջը գրած», որովհետեւ այդ գրքերով սերունդները սովորում են աշխարհական կարգեր, մարդկային հարաբերությունների բարեկիրթ ձեւեր: «Բայց պատճառը շատ բնական էր. էն լեզվըներումը նրանք կարդում էին երեւելի մարդկանց գործքերը, նրանց արածներն ու ասածները, նրանք կարդում էին էն բաները, որ մարդի սիրտ կարող էին գրավել, չունքի սրտի բաներ էին, ո՞վ չի սիրիլ, ո՞վ չի ուզիլ լսիլ, թե սերը, բարեկամությունը, հայրենասիրությունը, ծնողը, զավակը, կյանքը, մահը ի՞նչ զատ են, բայց էսպես բաները թե մեր լեզվումը ըլին, թո՛ղ աչքս հանեն: Էլ ընչո՞վ քո լեզուն էրեխին սիրիլ տաս»,- խոր համոզմունքով բանաձեւել է Խ. Աբովյանը: Սակայն աբովյանագիտությունն այս միտքը դիտարկել է միայն հայ նոր գրականության բովանդակության եւ թեմաների տեսանկյունից եւ կարծես անտեսել է նույնքան կարեւոր լեզվական խնդիրը: Նորից ընթերցենք մեջբերվածը եւ փորձենք հասկանալ, թե այս բանաձեւում ինչ են նշանակում «էն լեզվըներումը» եւ «մեր լեզվումը» արտահայտությունները. արդյո՞ք միայն քերականությունը, հնչյունաբանությունն ու բառագիտությունը, գոյականի հոլովումն ու բայի խոնարհումը, շարահյուսական կառույցները, կապակցության եղանակներն ու ոճագիտությունը: Բոլորին էլ հասկանալի է, որ վերը թվարկված հասկացությունները կամ թեմաները, որոնցով արտահայտվում, դրսեւորվում է գրականության բովանդակությունը, չկային հայոց լեզվով ստեղծված գրականության մեջ, եւ Խ. Աբովյանն այս պարագայում լեզու ասելով նախ եւ առաջ նրանով արտահայտված գրականություն է հասկացել: Բայց արդյո՞ք բովանդակազուրկ էր մեր գրաբար գրականությունը: Ո՛չ, ամենեւի՛ն: Մեր լեզվով արտահայտված գրականությունը «յա եկեղեցու վրա էր, յա Աստծու, յա սրբերի»: Այսինքն՝ մարդու կյանքի իմաստն ու նպատակը Եկեղեցուն, Աստծուն ու սրբերին օրհնաբանելն ու նրանց ծառայելն էր, որովհետեւ գրականությունից վտարված էին ժողովրդի սոցիալական կյանքը, հասարակական իդեալները, մարդկային բնական հույզերն ու ապրումները, հայրենիքի արժեւորումն ու ազգային իղձերը: Իսկ այդպիսի գրականությունը չէր ծառայելու ազգային ազատության, լուսավորության ու առաջադիմության վեհ նպատակներին, որ տենչում էին Աբովյանն ու մյուս լուսամիտ մարդիկ: Այդ նպատակների իրականացման համար Աբովյանն իր ողջ կյանքն էր ի սպաս դրել:

Բայց լուսավորությունը չէր կարող իրականանալ առանց դպրոցի եւ գրականության, որոնց նա վերապահում էր անփոխարինելի դաստիարակչական դերակտարություն: Հայության նոր սերունդներին պետք էր դպրոցում կրթել ու գրագիտացնել, որ կարողանակին ըմբռնել եւ իրագործել գրականության միջոցով հաղորդվող պատգամները, հայրենասիրական ու լուսավորական ծրագրերը: Իսկ Աբովյանի ձգտումն էր ապահովել ժողովրդի հոգեմտավոր վերածնունդը եւ նրան նախապատրաստել կենսական մեծ թռիչքների:

*Շարունակելի*

***Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ՄԱՊԴՅԻՆ ՍՈՎՋՎՐԿՆԵՐ

*Սկիզբը՝ էջ 7*

Որովհետեւ այս աշխարհում ապրում են մարդիկ, ովքեր մոռացել են իրենց Արարչին, ովքեր անում են, ինչ ուզում են, վայելում ու սպառում են անամոթաբար, անհագորեն, առանց չափ ու սահմանի, առանց տրամաբանության: Արդյունքում կործանվում է Երկիր մոլորակը, խախտվում՝ էկոհամակարգը, օդի խոնավության աստիճանը: Ամեն ինչ շեղվում է, որովհետեւ շեղվել ենք մենք եւ շեղվում ենք ավելի ու ավելի: Ահա այսպես՝ աշխարհը կամաց-կամաց կործանման է գնում: Այն ժամանակվանից ի վեր, ինչ մարդն ապրում է Երկիր մոլորակի վրա, այնքան վնաս չի հասցրել բնությանը, որքան հասցրինք մենք անցած դարում: Եվ հիմա տեսնում ենք՝ մի կիսագնդում տապ է, մյուսում՝ սելավներ, ջրհեղեղներ. ջրի տակ են անցնում մեծ տարածքներ, կորչում քաղաքներ, անհետանում տներ... Եվ ասում ես. «Աստվա՛ծ իմ, ի՞նչ է կատարվում, ինչպե՞ս հասանք այստեղ, ինչո՞ւ այսպիսին դարձանք»:

Այս ամենն են, եղբայրնե՛ր եւ քույրե՛ր, զբաղեցնում իմ միտքը հիմա, երբ ամառ է, եւ այնքա՜ն շոգ: Հուսով եմ՝ այժմ լսում եք ինձ մի հով վայրում՝ ամառանոցի խաղաղ անկյունում կամ ծովափին, եւ եթե դրա հնարավորությունը չունեք, ձեր սենյակում նստած՝ իջեցրած վարագույրներով, որպեսզի շատ լույս չմտնի ներս ու այրի ձեզ, կամ եթե ավտոմեքենայի մեջ եք, հուսով եմ՝ ձեր մեքենան օդափոխիչ ունի, որը թույլ եք միացրել, քանի որ սա էլ հաճախ վտանգավոր է առողջության համար:

Եվ սակայն մենք բոլորս ամառային այս եղանակին, այս անտանելի շոգին կարող ենք հովանալ, եթե ցանկանանք: Հովն, ի վերջո, ի՞նչ է: Ի՞նչ է նշանակում՝ հով է: Հովը միայն եղանակի հետ չէ կապված: Կարող է հով աշուն լինել, բայց սիրտդ այրվի, տառապես ինչ-որ բանից, զգաս, որ ներսում այրվում ես կյանքի նեղություններից, խնդիրներից: Եվ սա շատ ավելի վատ է. հանգիստ միջավայր, խաղաղ բնություն, հով եղանակ, եւ դու տանջվում ես: Եվ հակառակը. կարող է տապ լինել դրսում, իսկ ներսում՝ հով, ինչպես Բաբելոնում այն երեք մանկանց դեպքում, որ կրակի հնոցի մեջ զովություն էին զգում. մի զովություն, որ պարուրում էր նրանց, եւ կարողանում էին դիմանալ: Սա է մեր ուզածը, սա է գաղտնիքը:

Բացի դրանից, հովն ու շոգը որոշ չափով հարաբերական երեւույթներ են՝ կախված մարդկանց խառնվածքից, տարիքից, մարմնի կառուցվածքից: Մի տեսակ է շոգում երեխան, մի այլ տեսակ՝ միջին տարիքի մարդը, եւ մի այլ՝ ծերը: 80-90 տարեկան մարդն ավելի ծանր է տանում շոգը, մինչդեռ փոքր երեխան ավելի դիմացկուն է: Հետեւաբար յուրաքանչյուր մարդ պետք է հասկանա այս ամենը, ընդունի իր բնույթն ու այն ամենը, ինչ թույլ է տալիս Աստված, խոնարհաբար ու առանց տրտնջալու:

Ամեն օր հետեւում ենք եղանակին՝ ինչ է լինելու «վաղը»: Լա՛վ: Եղանակին հետեւելուց ի՞նչ օգուտ ես ստանում, բացի տրտնջալուց. «Ա՜խ, այս ի՜նչ է կատարվում»: Երջանիկ են այն մարդիկ, որ ընդունում են յուրաքանչյուր եղանակ՝ առանց իրենց հոգու ներքին եղանակի փոփոխության: Թող մեր հոգում միշտ գարուն լինի, եւ մեր սրտերում՝ հով ամառ, իսկ դրսում ինչ եղանակ ուզում է՝ լինի: Դրսում՝ շոգ, ներսում՝ հով, ներսում՝ Սուրբ Հոգին, որ ամեն ինչ կարող է դառնալ. երբ շոգում ես, քո ներսում զովություն է դառնում, իսկ երբ մրսում ես, տաքություն: Հոգու զովություն եւ հոգու տաքություն. սա է մեր ուզածը ամառ ու ձմեռ: Սա է նշանակում հով: Հով նշանակում է ներքին հանգստություն, խաղաղություն:

Հաճախ կռիվ ենք տալիս եղանակի դեմ, արտաքին երեւույթների դեմ ու փնտրում որեւէ պատճառաբանություն մեր վիճակի համար, ասում ենք՝ եղանակն է մեղավոր. անձրեւը, կարկուտը, շոգը: Եվ սովորաբար բոլոր եղանակները մեղավոր են, ու չգիտեմ՝ որ եղանակն ու որ շրջանն են տարվա մեջ, որ կարող են վերջապես հանդարտեցնել ու խաղաղեցնել մարդկանց: Հանգիստ մարդը միշտ հանգիստ է, խաղաղը՝ միշտ խաղաղ: Հավասարակշիռ, զուսպ, խոնարհ մարդը միշտ այնպիսին է, ինչպիսին Աստված է ուզում իրեն տեսնել, եւ նրան երբեք նեղություն չի պատճառում եղանակը, ինչ էլ որ լինի, քանի որ «քաղցր գարունն» ունի իր մեջ. «Իմ քաղցր գարուն, իմ քաղցր Զավակ» *(մեջբերումը հայտնի բյուզանդական շարականից է. Մարիամ Աստվածածնի ողբն է, որ երգվում է Ավագ ուրբաթ օրը)*: Տերը քաղցր գարուն է: Իհարկե, սուրբ չենք, քեզ համար էլ դժվար կլինի, դու էլ կքրտնես, շորերը մարմնիդ կկպչեն... սակայն եթե սիրում ես Նրան, եթե բնակվում է քո սրտում, ինչքան էլ որ շոգ լինի, կվայելես ամառը, կուրախանաս բոլոր եղանակներով, որովհետեւ յուրաքանչյուր եղանակ Աստված է թույլ տալիս: Եվ ինչպես ասացինք, նաեւ մեր սխալների արդյունք է, քանի որ անխնա սպառում ենք բնության բարիքները եւ բերում էկոլոգիայի անհավասարակշռության: Աստված մեզ դրել է այս աշխարհում ապրելու համար, իսկ մենք կործանում ենք այն եւ պետք է քաղենք դրա պտուղները:

Հով մթնոլորտ ստեղծելու համար շատ կարեւոր է, որ պահենք առողջ ապրելակերպի կանոնները, հետեւենք մեր սննդակարգին: Դա ասում են բժիշկները, այդ մասին լսում ենք հեռուստացույցով, ռադիոյով եւ այլն: Մեր մարմնի կառուցվածքն այնպիսին է, որ ամռանը կորչում է մարդու մեծ ախորժակը: Չես կարող ամռանը ծանր ուտելիքներ ուտել, չես կարող շատ շոգին, օրինակ, լոբի եփել: Շոգին օրգանիզմդ այդպիսի ծանր ուտելիքներ չի ուզում, այսինքն՝ ուտելիքներ, որ տաքություն են պատճառում մարմնին, այրում մարդուն: Չես կարող շատ շոգին նստել, ընկուզեղեն ուտել, որովհետեւ սրանք մեծ քանակությամբ կալորիաներ են տալիս օրգանիզմին, իսկ կալորիաները՝ տաքություն, եւ բարձրանում է մարմնի ջերմաստիճանը: Շատ շոգին չես կարող մեծ քանակությամբ վիսկի, կոնյակ խմել, որովհետեւ սրանք էլ քրտնեցնում են մարմինը եւ նեղում քեզ: Բայց ամառը լի է Աստծու ստեղծած բարիքներով՝ պտուղներով, մրգերով ու բանջարեղեններով, որոնք լի են հեղուկով եւ խոնավեցնում ու հանգստացնում են մարմինը: Աստված գիտի՝ ինչ է անում, եւ ամեն ինչում ներդաշնակություն կա: Ուտենք ամառանը բանջարեղեն, աղցաններ, մրգեր: Թող սրանք մեծամասնություն կազմեն մեր սննդակարգում, իսկ մնացածը լինեն սրանց լրացում: Այսինքն՝ ոչ թե աղցանը լրացնի ճաշին, այլ ճաշը՝ կանաչեղենին: Սա մեզ կպահի հավասարակշռության մեջ: Իսկ մարմինն անմիջապես ազդում է հոգու վրա: Շոգից թուլացած, հոգնած մարմինը հոգուն էլ դժվարություն է պատճառում: Տեսել եմ բազում հոգեւորականների, վանականների, որ շատ շոգի պատճառով ոչինչ չեն կարողացել անել՝ ո՛չ մտածել, ո՛չ նույնիսկ աղոթել, ո՛չ պարտականությունները ճիշտ կատարել... դժվարանում են: Հետեւաբար, օգնենք մեր հոգուն նաեւ մարմնի միջոցով: Գոյություն ունի երկխոսություն մարմնի եւ հոգու միջեւ: Մի մարմին, որ հավասարակշռված է գործում, հոգուն էլ է օգնում հավասարակշիռ լինելու, մի մարմին, որ ծանրացած չէ շատ ու ծանր, ճարպոտ, տապակած ուտելիքներով, քեզ եռանդ ու ուժ է տալիս: Հիմա՝ ամռանը, դրանք մեզ նեղություն են տալիս եւ դարձնում անշարժ, դժվարանում ենք մտածել, քնել եւ այլն: Բայց դուք, որ ծնող եք, պետք է լինեք առողջ ու եռանդուն: Կյանքը շարունակվում է. ուտելիքը պետք է պատրաստվի, գործերը պետք է կատարվեն, ծախսերը պետք է շարունակվեն: Եվ ովքեր գնում են հանգստանալու, նրանց ծախսն ավելի շատ է լինում, թեկուզ եւ հանգստանում են: Ոմանք դրան ուրախությամբ են պատրաստվում, իսկ ոմանք գրպաններն են նայում. արդյոք կիսերիքի՞ փողը: Ուրեմն, պետք է պահենք մեր ուժերը եւ լինենք առողջ:

*Շարունակելի*

***Հունարենից թարգմանեց***
***Տաթեւիկ ՍՏԵՓԱՆՅԱՆԸ***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**

**Էլ.փոստ՝** qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
**web կայք՝**
**krishayas.wordpress.com**
Ստորագր. 29.06.2018թ.

**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**